ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«17» Մարտի 2025թ. ՆՄՈ/417 -Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N393 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ «ՆԵՐՍԻՍՅԱՆ» N6 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ», «ԱՐԱԳԱԾԻ Մ□ ՄԵԽԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ԵՎ «ԱՐԱՔՍԻ Զ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշման 5.4-րդ և 6-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի փետրվարի 19-ի ՆՄՈ/259-Ա և ՆՄՈ/260-Ա և 2025 թվականի մարտի 14-ի ՆՄՈ/411-Ա որոշումները.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2017 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների կանոնադրությունները հաստատելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N393 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված N14 հավելվածի «Արաքսի Զ. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց», N50 հավելվածի «Վաղարշապատի «Ներսիսյան» N6 հիմնական դպրոց» և N64 հավելվածի «Արագածի Մ. Մեխակյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN1-3 հավելվածների:
2. Հաստատել «Արաքսի Զ. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց», «Վաղարշապատի «Ներսիսյան» N6 հիմնական դպրոց» և «Արագածի Մ. Մեխակյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների փոփոխությունները՝ համաձայն NN1-3 հավելվածների:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

2025-03-17 18:51:13 GMT+4
Հավաստված է էլեկտրոնային կնիքով
eID

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2025 թվականի մարտի 17-ի ՆՄՈ/44-Ա որոշման

«Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2017 թվականի հոկտեմբերի 18-ի N393 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
1. «Վաղարշապատի «Ներսիսյան» N6 հիմնական դպրոց»
2. «Արագածի Մ. Մեխակյանի անվան միջնակարգ դպրոց»
3. «Արաքսի Զ. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց»

:»:

Գլխավոր քարտուղար՝ **Ա. Հովհաննիսյան**

Недействительная подпись

VERIFIED OCSP 17.03.2025 10:43:26 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023